



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

01 հուլիսի 2021 թվականի թիվ 109-Ա

ք. Երևան

ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ, ՄՏԱՎՈՐ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՍՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ և 32-րդ հոդվածի 7-րդ մասերով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշում է*.

1. Սահմանել անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 14-ի «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հեռուստառադիոհաղորդումների (ֆիլմերի), այլ տեսաձայնաշարային նյութերի որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 90-Ա որոշումը:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

01 հուլիսի 2021թ.
ք. Երևան

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ, ՄՏԱՎՈՐ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՍՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ

1. Սույն չափորոշիչները սահմանում են, որ Հայաստանի Հանրապետության տարածքում անչափահասների իրավունքներին վերաբերող հրապարակումներում տեսալսողական մեդիաձառայությունները մատուցողները պետք է գործեն մասնագիտական էթիկական նորմերի, ՀՀ օրենսդրության և միջազգային կոնվենցիաների պահանջներին համապատասխան: Քանի որ երեխաներն ունեն հատուկ հոգաձության և օժանդակության իրավունք, ուստի յուրաքանչյուր երեխայի իրավունքները և շահերը ավելի վեր են, քան այս կամ այն հիմնախնդրի լուծման հրատապությունը և տեսալսողական ծրագրում այն օգտագործելու անհրաժեշտությունը: Յուրաքանչյուր երեխա պետք է պաշտպանված լինի ցանկացած իրավիճակում, նրա շահերը, անվտանգությունը պետք է գերակա լինեն խմբագրական ցանկացած պահանջների հանդեպ:

Մասնավորապես, տեսալսողական մեդիաձառայությունները մատուցողները պետք է առաջնորդվեն հետևյալ սկզբունքներով.

1) Անչափահասներին վերաբերող հիմնախնդիրները լուսաբանելիս տեսալսողական մեդիաձառայություններ մատուցողները ձգտում են առավելագույն ճշգրտության, ապահովում են անչափահասների մասին տրամադրած տեղեկատվության հավաստիությունը.

2) Տեսալսողական նյութերում տեսալսողական մեդիաձառայություններ մատուցողները խուսափում են անչափահասներին վնաս հասցնող տեղեկատվության օգտագործումից.

3) Տեսալսողական մեդիաձառայություններ մատուցողները գիտակցում են անչափահասներին վերաբերող յուրաքանչյուր տեսալսողական նյութ հեռարձակելու հետևանքները և նվազագույնի են հասցնում նրանց համար հնարավոր վտանգները.

4) Տեսալսողական մեդիաձառայություններ մատուցողները ստուգում են անչափահասների անունից ելույթ ունեցող և նրանց շահերը ներկայացնող ցանկացած անձի կամ կազմակերպության իրավասությունները.

5) Տեսալսողական մեդիածառայություններ մատուցողները տեղեկացված են, որ անչափահասը ունի մտքի, խղճի և դավանանքի ազատություն՝ ըստ ծնողների կողմից տրվող պատշաճ կողմնորոշման և Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

2. Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող են համարվում այն տեսալսողական հաղորդումները, որոնք՝

1) հրապարակում են անչափահասների մասին տեղեկատվություն, ներառյալ՝ անձնական տվյալներ (անուն/ազգանուն, տարիք, բնակության վայր) կամ ցուցադրում են դեմքը՝ առանց ծնողների, խնամակալի, հոգաբարձուի համաձայնության: Սա հատկապես կարևորվում է խոցելի իրավիճակում գտնվող անչափահասների և ընտանիքների պարագայում (խոցելիության սահմանման համար հիմք են ընդունվում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անչափահասների համար սահմանված պետական չափորոշիչները),

2) ցուցադրում են բռնություն (հոգեբանական, ֆիզիկական, սեռական և այլն) պարունակող կադրեր (նվազագույնը՝ առանց դատապարտելու բռնությունը) կամ խրախուսում են բռնի գործողությունները մարդկանց կամ կենդանիների հանդեպ,

3) կնոջ և տղամարդու խիստ կարծրատիպացված կերպարներ են քարոզում, կնոջը ներկայացնում են մշտապես ենթարկվողի, ճնշվածի կերպարով, իսկ տղամարդուն՝ իշխանություն և բռնություն գործադրողի,

4) խեղաթյուրում են հանրակրթական ուսումնադաստիարակչական ծրագրերում ներառված պատմական իրողությունները, վարկաբեկում և նսեմացնում են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգությունը,

5) նսեմացնում և վարկաբեկում են համամարդկային արժեքները, Հայ Առաքելական եկեղեցուն, ինչպես նաև Հայաստանում գրանցված և գործող այլ կրոնական կազմակերպություններին,

6) ժխտում են բարոյականության համընդհանուր նորմերը և քարոզում անբարո ապրելակերպ, նսեմացնում կրթության և դաստիարակության դերը,

7) նպաստում են հանցագործ աշխարհի բարքերի, վարվելաձևերի, խոսելաձևերի հասարակության մեջ տարածմանը, հանցագործ կերպարների և կենսակերպի ռոմանտիզացիային,

8) ցուցադրում կամ նմանակում են թմրամոլի կամ հարբեցողի՝ առանց դատապարտելու թմրամոլությունը և հարբեցողությունը,

9) երեխաների մոտ ցանկություն են առաջացնում մասնակցելու մոլեխաղերին, զբաղվել մարմնավաճառությամբ, շրջմոլիկությամբ կամ մուրացկանությամբ,

10) ծաղրում կամ ծաղրելով նմանակում են հաշմանդամություն (ֆիզիկական և/կամ մտավոր) ունեցող անձանց,

11) պարունակում են գռեհկաբանություն և հայհոյախոսություն:

3. Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումները կարող են եթեր հեռարձակվել ժամը 24.00-6.00-ն ընկած ժամանակահատվածում: